

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔ

«ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 29-ի ՀՕ-359-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) 1-ին պարբերությունից հանել «լիցենզավորման,» և «, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի գործունեության տեսակի փոփոխման կարգը» բառերը.

2) 2-րդ պարբերությունից հանել «(բացառությամբ սույն օրենքի 6-րդ գլխով նախատեսված դեպքերի)» բառերը:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների» բառերով:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «սույն օրենքով սահմանված կարգով» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վարկային կազմակերպության գործունեության» բառերով,

2) հոդվածը լրացնել 4.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպություններին արգելվում է անձամբ վարել իրենց մասնակիցների ռեեստրը:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպություններն իրենց մասնակիցների ռեեստրի վարումը պարտավոր են հանձնել «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համապատասխան անձանց:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպություններն իրենց մասնակիցների ռեեստրի վարումը պարտավոր են հանձնել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համապատասխան անձանց:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կոոպերատիվ վարկային կազմակերպություններն իրենց մասնակիցների ռեեստրի վարումը պարտավոր են հանձնել Կենտրոնական բանկին:»:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«1. Արգելվում է Կենտրոնական բանկի կողմից որպես վարկային կազմակերպություն կամ դրա մասնաճյուղ (ներկայացուցչություն) չգրանցված անձանց կողմից «վարկային կազմակերպություն» բառակապակցության, դրա հոլովված ձևերի, օտար լեզվով այդ բառերի հայերեն տառադարձությունների, թարգմանությունների կամ դրանց գուգորությունների օգտագործումն իրենց անվան մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որևէ կերպ աջակցելը գովազդելուն, եթե դրանց օգտագործման իմաստից չի բխում որ խոսքը չի վերաբերում սույն օրենքով սահմանված վարկային կազմակերպության գործունեությանը, և եթե նման օգտագործման իրավունքը չի վերապահվել օրենքով կամ միջազգային պայմանագրով:»»:

Հոդված 5. Օրենքի 2-րդ գլխի վերնագրից հանել «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ» բառերը:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 5. Վարկային կազմակերպության լիցենզավորումը

1. Վարկային կազմակերպության լիցենզավորման կարգը և պայմանները սահմանվում են բացառապես «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Այլ օրենքներով լիցենզավորման վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում վարկային կազմակերպությունների համար գործում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:»:

Հոդված 7. Օրենքի 5.1-7-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում «սույն օրենքով սահմանված» բառերը փոխարինել «վարկային կազմակերպության գործունեության» բառերով:

Հոդված 9. Օրենքի 9-10-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով.

2) 3-րդ մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1 գլխով» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով:

Հոդված 11. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «գ» կետում «վարկային կազմակերպության ղեկավարի որակավորման վկայականից զրկում» բառերը փոխարինել «վարկային կազմակերպության ղեկավարին կամ պատասխանատու աշխատակցին տրված չառարկելու մասին նամակի հետ կանչում» բառերով.

2) 4-րդ մասում՝

ա. «Լ «Բանկերի և քանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել «, «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» և «Բանկերի և քանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով» բառերով.  
բ. երկրորդ նախադասությունը հանել.

3) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենքի 6-րդ և 6.1-րդ գլուխներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: